ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀԿԳՆՇՀԱՇՁԲ-15/3-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.04.2017թ. ժամը 10:00-ին /Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ազատյան /նախագահ/

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Մանուկյան /գնահատող/

Տ.Գալստյան /գնահատող/

Գ.Խաչատրյան/բացող/

Մ. Ասլանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

Հայտերի բացման և գնահատման մասին

1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀԿԳՆՇՀԱՇՁԲ-15/3-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեները
1	Ա/Ձ Արման Ասմանգուլյան	armana6@mail.ru
2	<<Աստղիկ գրատուն>> ՍՊԸ	astghik59@gmail.com
3	<<ԷՎԱ>> ՍՊԸ	-
4	<<Առեդիտ>> ՍՊԸ	areditllc@gmail.com

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 <<Աստղիկ գրատուն>> ՍՊԸ-ի և <<Առեդիտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.2 Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորպես՝ բացակայում է հավելված 3.1-ը:

3.3 <<ԷՎԱ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորպես՝ բացակայում են վերջինիս կողմից կազմված բոլոր հավելվածները, ներառյալ գնային առաջարկը:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 <<Աստղիկ գրատուն>> ՍՊԸ-ի, Ա/Ձ Արման Ասմանգուլյանի և <<Առեդիտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

4.2 <<ԷՎԱ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են այլ կազմակերպության անունով:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցների ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին	Նախահաշվայի՛ն գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները							
		Ա/Ձ Արման Ասմանգուլյան		<<Աստղիկ գրատուն>> ՍՊԸ		<<ԷՎԱ>> ՍՊԸ		<<Առեդիտ>> ՍՊԸ	
		Առաջարկված գները, ՀՀ դրամ							
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	3232850	2680900	3217080	2562625	3075150	-	-	5000000	5000000
2	6489000	4977000	5972400	5208000	6249600	-	-	-	-
3	682000	566500	679800	562650	675180	-	-	1500000	1500000

6. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 45-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել Ա/Ձ Արման Ասմանգուլյանին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները :

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս.թ. ապրիլի 7-ին ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Ս. Ազատյան /նախագահ/

Կ.Մանուկյան

Տ.Գալստյան

Դ.Խաչատրյան

Մ. Ասլանյան

Ա. Մարգարյան /քարտուղար/

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2 /շարունակություն/

«ՀՀԿԳՆՇՀԱՇՁԲ-15/3-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.04.2017թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ազատյան /նախագահ/

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Մանուկյան /գնահատող/

Տ.Գալստյան /գնահատող/

Գ.Խաչատրյան/բացող/

Մ. Ասլանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների մասին

1.1 Ա/Ձ Արման Ասմանգուլյանը սահմանված ժամկետում չի շտկել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

2. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը.

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝

<<Աստղիկ գրատուն>> ՍՊԸ-ին՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար:

Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝

<<Առեդիտ>> ՍՊԸ-ն՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.2 Հիմք ընդունելով 05.04.2017թ թիվ 2 արձանագրության 3.2-րդ, 3.3-րդ, 4.2-րդ և սույն արձանագրության 1.1-րդ կետը՝ մերժել Ա/Ձ Արման Ասմանգուլյանի և <<ԷՎԱ>> ՍՊԸ-ի հայտերը՝ հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

3,1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ մասով ընդունված որոշումը՝ շարունակել հայտերի գնահատման գործընթացը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:
3,2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցից հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ հաջորդ երեք աշխատանքային օրվա ընթացքում ժամը 10:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Ս. Ազատյան /նախագահ/

Կ.Մանուկյան

Տ.Գալստյան

Գ.Խաչատրյան

Մ. Ասլանյան

Ա. Մարգարյան /քարտուղար/